



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐԻ,
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՎՃԱՐՆԵՐԻ,
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Ջոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Լուսինե Սահակյանի, Կարեն Մեթլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նիկոլայ Բաղդասարյանի, Ռուբեն Հակոբյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին հարցը,

Պ Ա Ր Չ Ե Ց՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, հանդիսանալով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն, իր առջև ունի հետևյալ խնդիրները՝

1) պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

2) կազմակերպել փաստաբանների արտոնագրման գործընթացը.

3) կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստումը.

4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ.

5) միջոցներ ձեռնարկել փաստաբանության հեղինակության բարձրացման

05 փետրվարի 2014թ.

թիվ 3/8-Լ

ուղղությամբ.

6) սույն օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես ապահովել մատչելի և արդյունավետ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը.

7) նպաստել հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը:

Վերոհիշյալ խնդիրներն իրագործելու համար Պալատն իր գործունեությունն ապահովում է հիմնականում անդամ-փաստաբանների կողմից վճարվող անդամավճարների հաշվին: Հետևաբար, Պալատի գործունեության համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը կամ սղությունը բերելու է որոշ խնդիրների իրագործման անհնարինությանը կամ ոչ որակյալ իրականացմանը:

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ **փաստաբանների պալատի խորհուրդը սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, ինչպես նաև փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը...**

Պալատի խորհուրդը գտնում է, որ պետք է անփոփոխ թողնել՝ **ա.** անդամավճարի գործող չափը 5.000 ՀՀ դրամ, **բ.** վերապատրաստման վճարի չափը՝ 0, **գ.** լրացուցիչ վերապատրաստման չափը՝ 1 ակադեմիական ժամը 1000 ՀՀ դրամ, **դ.** փաստաբանի հավակնորդի մուտքի վճարի գործող չափերը (150.000 ՀՀ դրամ և 60.000 ՀՀ դրամ), **ե.** փաստաբանի օգնականի մուտքի և ամենամսյա վճարները, իսկ 70 տարեկանից բարձր և առաջին կարգի հաշմանդամ փաստաբանների անդամավճարի չափը պետք է սահմանել 0 (զրո):

Ելնելով վերոգրյալից,

հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետի պահանջները,

Պալատի խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց '

1. Փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանել 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն որոշման 1.1, 1.2, 1.3 և 1.4 ենթակետերում նշված դեպքերի:

(կեղը լրացվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/9-L որոշմամբ, 20.02.2018թ. թիվ 4/9-L որոշմամբ](#))

1.1. 70 (յոթանասուն) տարին լրացած փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանել 0 (զրո):

1.2. Առաջին կարգի հաշմանդամ փաստաբանի անդամավճարի չափը սահմանել 0 (զրո):

1.3. Երևան քաղաքից առնվազն 120 (հարյուր քսան) կիլոմետր հեռավորության վրա գտնվող բնակավայրում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանի ամսական անդամավճարի չափը սահմանել 4.500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին գրավոր դիմելու պահից,

պայմանով, որ փաստաբանն անդամավճարի պարտք չունի: Հերագայում առնվազն երկու ամսվա անդամավճար չվճարելու դեպքում, անդամավճարի չափը սահմանվում է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

(ենթակետը լրացվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 18.12.2014թ. թիվ 35/9-Լ որոշմամբ](#))

1.4. Սույն որոշման հավելվածում նշված Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանի անդամավճարի չափը սահմանել 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին գրավոր դիմելու պահից:

(ենթակետը լրացվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 20.02.2018թ. թիվ 4/9-Լ որոշմամբ](#))

2. Փաստաբանի վերապարաստման համար անհրաժեշտ վճարի չափը փարեկան 24 (քսանչորս) ակադեմիական ժամի համար սահմանել 0 (զրո):

3. Փաստաբանի՝ որպես կարգապահական տույժ կիրառվող լրացուցիչ վերապարաստման դասընթացներին, ինչպես նաև կասեցված արտոնագիրը վերականգնելուց հետո վերապարաստման դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ վճարի չափը 1 (մեկ) ակադեմիական ժամի համար սահմանել 1.000 (հազար) ՀՀ դրամ:

4. Փաստաբանի հավակնորդի մուտքի վճարը սահմանել 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամն ավարտած հավակնորդի, որի մուտքի վճարը սահմանել՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

5. Փաստաբանի օգնականի մուտքի վճարը սահմանել 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն որոշման 5.1 կետում նշված դեպքի:

5.1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի ունկնդրի կարգավիճակ ունեցող փաստաբանի օգնականի մուտքի վճարը սահմանել 0 (զրո):

6. Փաստաբանի օգնականի ամենամսյա վճարը սահմանել 1.000 (հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն որոշման 6.1 կետում նշված դեպքի:

6.1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի ունկնդրի կարգավիճակ ունեցող փաստաբանի օգնականի ամենամսյա վճարը սահմանել 0 (զրո)՝ ունկնդրի կարգավիճակ ունենալու ժամանակահատվածում:

7. Ուժը կորցրած ճանաչել Պալատի խորհրդի՝ «Փաստաբանի անդամավճարի, փաստաբանի հավակնորդի, օտարերկրացի փաստաբանի հավաքարմագրման մուտքի և փաստաբանի օգնականի մուտքի ու ամենամսյա վճարները սահմանելու մասին» 17.02.2012թ. թիվ 9/8-Լ և «Անդամավճարի և վերապարաստման վճարի չափերը սահմանելու մասին»

02.05.2012թ. թիվ 15/21-Լ որոշումները:

8. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի փետրվարի 6-ից:

9. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններին՝ Պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**05 փետրվարի 2014թ.
թիվ 3/8-Լ
ք. Երևան**